ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Գրիգորյան

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵՆ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ 1964-1985 ԹԹ. [1]

Բանալի բառեր. սփյուռք, կոմիտե, համայնք, Մեծ Բրիտանիա, գաղթօջախ, մշակույթ, այցելություններ:

Մեծ Բրիտանիայի հայությունը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ծրագրերում: 1964 թ. ստեղծված[2] Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) ակտիվորեն համագործակցում էր ի թիվս այլ համայնքների նաև Մեծ Բրիտանիայի հայ համայնքի հետ: Վերջինս չնայած համեմատաբար սակավաթիվ լինելուն (1967 թ. դրությամբ՝ շուրջ 5 հզ[3]) իրենից էական կշիռ էր ներկայացնում: Մեծ Բրիտանիայի հայության հետ աշխատանքները համակարգում էր Կոմիտեի Եվրոպայի բաժինը[4]՝ համագործակցությունը կառուցելով կրթության բնագավառում (նախատեսվում էր ուշադրություն դարձնել Մեծ Բրիտանիայի հայ երիտասարդների՝ հայրենիքում ուսանելու հարցին), ուսուցիչների վերապատրաստման կազմակերպման ասպարեզում, հայրենիքում Մեծ Բրիտանիայի հայ երեխաների ամառային հանգստի կազմակերպման, գիտամշակութային և տուրիստական պատվիրակությունների փախայցերի իրականացման, թերթերի ու գրականության առաքման և մի շարք այլ գործերում[5]:

1972 թ. Եվրոպական երկրների բաժնի համար Մեծ Բրիտանիայի հետ կապված աշխատանքային ծրագրում առաջ էր քաշվում գործունեության հետևյալ ուղղությունները.

1. բոլոր միջոցներով խրախուսել երիտասարդ ուժերին և մամուլի բաժնի միջոցով օգնել նրանց նորաստեղծ «Սարդարապատ» հանդեսին,
2. հատուկ ուշադրություն դարձնել երիտասարդական-ուսանողական կազմակերպություններին,
3. հատուկ ուշադրություն դարձնել Մեծ Բրիտանիայում հրատարակվող նորաստեղծ հայկական թերթերին, բոլոր միջոցներով օգնել նրանց, որ տպագրվեն ու ճանաչում ձեռք բերեն գաղթօջախում[6]:

Մեծ Բրիտանիայի հայ համայնքն ըստ Կոմիտեի տեղեկագրերի: Կոմիտեի աշխատանքներում հատկապես կարևոր նշանակություն էր տրվում համայնքերի ուսումնասիրությանը: Արխիվային փաստաթղթերում պահպանվել են համայնքերի մասին տեղեկագրեր, որոնք պատրաստվել են ԽՍՀՄ դիվանագիտական ներկայացուցիչների կամ Կոմիտեի աշխատակիցների կողմից և դրվել գործունեության հիմքում:

Հատկապես հետաքրքրական է Կոմիտեի կազմած 1976 թ. տեղեկանքը Մեծ Բրիտանիայի հայ համանքի մասին: Մեծ Բրիտանիայում այդ ժամանակ բնակվում էր 5-6 հազար հայ: Արդեն 1984 թ. ըստ Կոմիտեի տեղեկագրի՝ հայերի թվաքանակը Մեծ Բրի-

---

Հոդվածը ներկայացվել է 17.04.2019 թ., երաշխավորվել է հրատարակության պ.գ.թ. Արա Հովհաննիսյանի կողմից (20.05.2019 թ.), ընդունվել է տպագրության 12.06.2019 թ.:

[1] Հոդվածի ժամանակային ընդգրկումը վերաբերում է Կոմիտեի գործունեության առավել արդյունավետ՝ Վ. Համազասպյանի նախագահության տարիները:

[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) ֆոնդ 875, ցուցակ 1, գործ 2, թուղթ 1-2:

[3] Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 9, թ. 2:

[4] Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 1, թ. 1:

[5] Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 11, թ 9:

[6] Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 3-4:

տանիայում արդեն հասնում էր 17. 000-ի[1]: Գաղութն համալրվել էր Կիպրոսից, Իրաքից, Միջին Արևելքից գաղթածների հաշվին[2]: Ըստ տեղեկանքի՝ Մեծ Բրիտանիայում հայ համայնքը հիմնականում բաղկացած էր Հնդկաստանից եկած հայերից, որոնք հաստատվել էին Լոնդոնում և Մանչեսթրում: Նշվում էր, որ համայնքը հատկապես աշխուժացել էր վերջին տասնամյակներում՝ Կիպրոսից և այլ երկրներից եկած հայերով:

Լոնդոնում գործում էր «Հայ տուն» միությունը, որտեղ տեղի էին ունենում հավաքներ, ժողովներ, դասախոսություններ, հայրենիքից և այլ համայնքներից եկած հյուրերի ընդունելություն: Կարևոր իրողություն էր պրոխորիրդային «Լոնդոն» հայկական թերթի տպագրությունը, և նրա խմբագրությունը համագործակցում էր Կոմիտեի հետ[3]:

Մեծ Բրիտանիայում գործում էին հայկական երկու եկեղեցի՝ Սուրբ Սարգիս և Սուրբ Պետրոս: Եկեղեցական խորհրդին կից գործում էր երգչախումբ: Մեծ Բրիտանիայի հայ նշանավոր երաժիշտներ էին ջութակահարներ Չիլինգարյանը և Բարիկյանը: Կային նաև հայ մանկավարժներ, որոնք սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրով եղել էին Խորհրդային Հայաստանում: Գործում էր նաև «Անահիտ» անվամբ կանանց հանձնախումբ՝[4]:

1970-ական թթ. Մեծ Բրիտանիայի հայ համայնքի ամենակարևոր կազմակերպությունը «Հայ տունն» էր[5], որը հիմնադրվել է 1962 թ. հունիսի 17-ին: Հիմնադիր անդամներն էին Հ. Գալուստյանը, Հ. Մութաֆյանը, Է. Պենլյանը, Գ. Կորկոտյանը, Լ. Ասլաճյանը, Ա. Ապաճյանը, Հ. Ապաճյանը, Ս. Մկրյանը, Ն. Տերունյանը: Միության անդամներ կարող էին դառնալ հայազգի բոլոր ցանկացողները: «Հայ տունն» ուներ մշակութային, թատերական և ընկերային բաժիններ: Հ. Գալուստյանը միաժամանակ ղեկավարում էր Լոնդոնի միակ հայկական «Արեգակ» ամսաթերթը[6]:

«Հայ տունն» ուներ գրադարան, որին Կոմիտեն պարբերաբար գրքեր էր ուղարկում[7]: Այստեղ հաճախ կազմակերպվել են գեղարվեստական և ընկերային հավաքույթներ: Հյուրերը համայնքի անդամների հետ հանդիպումներ էին ունենում «Հայ տանը»: Հայրենիքից «Հայ տուն» այցելություններ են ունեցել Ա. Առաքելյանը, Ռ. Զարյանը, Գ. Բրուտյանը, Ց. Բրուտյանը, Ա. Մռավյանը, Ե. Խոճամիրյանը, Ս. Մովսիսյանը[8]:

«Հայ տան» իրականացրած միջոցառումների ցանկից հարկ է առանձնացնել 1969 թ. Հ. Թումանյանի 100-ամյակի տոնակատարությունները Լոնդոնում, որի կազմակերպմանն աջակցել է Կոմիտեն[9]: Նշվել է նաև Կոմիտասի ծննդյան 100-ամյակը, որտեղ ներկայացվել է Կոմիտասի կյանքն ուգործունեությունը[10]:

Ցավոք «Հայ տունը» 1980-ական թթ. սկզբին դադարեցրեց իր գործունեությունը[11]:

Մեծ Բրիտանիայում ՀԲԸՄ-ի տեղական մասնաճյուղի հովանավորությամբ գործում էր «Սահակ Մեսրոպ» վարժարանը: Վարժարանի տնօրենն էր Կ. Եսայանը, որը կազմել էր հայոց լեզվի, գրականության և հայ ժողովրդի պատմության դասավանդման ծրագրեր հայախոս և անգլախոս աշակերտների համար[12]: 1979 թ. Մեծ Բրիտանիայում բացվեց հայկական երկրորդ դպրոցը Մանչեսթրում[13]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, g. 13, գ. 13, թ. 1-2:
[2] Տե՛ս Ղանալանյան Տ., Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին, Ե., 2016: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 875, g. 6, գ. 19, թ. 48:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 34, թ. 6:
[4] Տե՛ս նույն տեղում, g. 4, գ. 19, թ. 48:
[5] Տե՛ս Վարդանյան Ն., Մշակութային և հասարակական կյանքը սփյուռքում (1969 թ. հուլիս-դեկտեմբեր), «Պատմաբանասիրական հանդես», 1970, թիվ 1, էջ 247:
[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 8, գ. 187, թ. 31:
[7] Տե՛ս նույն տեղում, g. 2, գ. 188, թ. 32:
[8] Տե՛ս նույն տեղում, թ. 33:
[9] Տե՛ս նույն տեղում, g. 4, գ. 298, թ. 5-6:
[10] Տե՛ս Վարդանյան Ն., Մշակութային և հասարակական կյանքը սփյուռքում (1969 թ. հունվար-հունիս), «Պատմաբանասիրական հանդես», 1969, թիվ 3, էջ 259:
[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 14, գ. 26, թ. 4-5:
[12] «Հայրենիքի ձայն», շաբաթաթերթ, 1978, թիվ 18:
[13] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 6, գ. 34, թ. 6:

Ըստ Կոմիտեի 1984 թ. տեղեկագրի Մեծ Բրիտանիայի հայ համայնքի ներկայացուցիչների հիմնական մասը առևտրականներ, արհեստավորներ, բժիշկներ և ուսանողներ էին: Լոնդոնում գործում էին հետևյալ հայկական միությունները.

1. ՀԲԸՄ-ի մասնաճյուղ (նախագահ՝ Հարություն Մութաֆյան),

2. Թեքեյան մշակութայի միություն (նախագահ՝ Կարո Գրիգորյանը, 1980 թ. սկսած հրատարակում է «Էրեբունի» ամսաթերթը,

3. «Անահիտ» միությունը, որի նպատակն էր օգնել հայ ուսանողներին,

4. Հայ երիտասարդական միություն, որը մի ժամանակ ունեցել է բեղուն գործունեություն, իսկ 1980-ական թթ. սկզբին այլևս ակտիվ չէր,

5. Հայ արվեստագետների միություն, որը պարբերաբար կազմակերպում էր ցուցահանդեսներ[1]:

1980 թ. հիմնադրված «Էրեբունի» ամսաթերթը հրատարակվում էր 500 օրինակով և ուներ 250 բաժանորդ: Գործում էր նաև դպրոց, որտեղ սովորում էր 200-300 աշակերտ:

Ինչպես բոլոր մյուս համայնքներում, այստեղ ևս առկա էին Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ) կառույցներ: Ակտիվ գործունեություն էին ծավալում «Հայ մարմնակրթական ընդհանուր միություն» կազմակերպությունը, որը՝ «Նոր սերունդ» մշակութային միության հետ, ըստ Կոմիտեի արխիվային նյութերի, պայքարի մեջ էր ինչպես ՀԲԸՄ-ի, այնպես էլ Թեքեյան մշակութային միության հետ[2]: Դաշնակցականներին հաջողվել էր իրենց շուրջ հավաքել մեծ թվով համակիրների՝ հատկապես Մերձավոր և Միջին Արևելքից եկածների: Նրանք վարձակալել էին անգլիական դպրոցի տարածք, որտեղ օրական հավաքվում է 500-700 մարդ: Համեմատության համար նշենք, որ «Հայ տունը» լավագույն դեպքում ընդունում էր 100-120 մարդ[3]: Կարճ ժամանակամիջոցում նրանց հաջողվել էր ստեղծել լավ մարզական խմբեր, որոնք մեծ հետաքրքրություն էին առաջացնում Մեծ Բրիտանիայի հայ երիտասարդության շրջանում: Այդ ակումբներ էին այցելում նաև ՀԲԸՄ-ի և Թեքեյան մշակութային միության անդամները[4]: Եկեղեցական խորհրդում ևս մեծամասնություն էին կազմում դաշնակցականները[5]:

Պետք է նշել, որ «առաջադիմական» կազմակերպություններից օրինակ Մեծ Բրիտանիայի Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) տեղական մարմինը և Լոնդոնի ՀԲԸՄ-ի մասնաճյուղը լուրջ տարաձայնություններ ունեին Կոմիտեի հետ[6]:

Կապերի հաստատումը: Երբ 1964 թ. Կոմիտեն Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության (ԱՕԿՍ) Սփյուռքի բաժնից ստացավ նրա գործերը, պարզվեց, որ այդ ընկերությունը կապ էր ունեցել միայն 631 կազմակերպության և անհատի հետ[7]: Ինչ վերաբերվում է Մեծ Բրիտանիայից անհատ գործիչների և արվեստագետների հետ կապերին, ապա այն խիստ աղքատիկ էր [Դաուսեթ Չարլզ (հայագետ, արևելագետ), Գյուտյան Միքայել (նկարիչ), Գյուլբենկյան Էդգար (հասարակական գործիչ), Աբելյան Լևոն (հայագետ-վարդապետ)], իսկ բրիտանահայ կազմակերպությունների հետ կապերն իսպառ բացակայում էին[8]: Ակնհայտ է, որ Կոմիտեն Մեծ Բրիտանիայի հայության հետ աշխատանքները գործնականում սկսում էր զրոյից[9]:

Սակայն արդեն 1964-1965 թթ. Կոմիտեն բավականին աշխատանք էր կատարել և կապեր էր հաստատել Մեծ Բրիտանիայի մի շարք հայ կազմակերպությունների հետ:

Դրանք էին՝

1. Լոնդոն «Հայ տուն» միությունը (ղեկավար՝ Ա. Խաչատրյան),

---

[1] Տե՛ս նույն տեղում, g. 13, գ. 154, թ. 3:
[2] Տե՛ս նույն տեղում, g. 8, գ. 187, թ. 30:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 31:
[4] Տե՛ս նույն տեղում, g. 13, գ. 48, թ. 6-8:
[5] Տե՛ս նույն տեղում, g. 16, գ. 41, թ. 1-4:
[6] Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 1-4:
[7] Տե՛ս նույն տեղում, g. 2, գ. 2, թ. 5:
[8] Տե՛ս նույն տեղում, g. 1, գ. 23, թ. 1-5:
[9] Տե՛ս նույն տեղում, g. 2, գ. 118:

2. առաջնորդարանը (ղեկավար՝ Պսակ Թումայան),

3. Մեծ Բրիտանիայի հայ երիտասարդական միությունը,

4. Մանչեստրում Մեծ Բրիտանիայի հայ երիտասարդական միության բաժանմունքը (ղեկավար՝ Մ. Եղվարդ),

5. Հայ կանանց ընկերությունը (ղեկավար՝ Մարի Ստամպուլյան)[1]:

Կոմիտեի հետ համագործակցում էր նաև ՀԲԸՄ-ի Լոնդոնի մասնաճյուղն իր գեղարվեստական, երիտասարդական, տիկնանց և այլ հանձնախմբերով[2]:

Մեծ Բրիտանիայի հայ համայնքի կյանքի աշխուժացման համար կարևոր էր 1971 թ. հուլիսից հրատարակվող «Սարդարապատ» ամսաթերթը, որն ուներ հայերեն և անգլերեն բաժիններ: Թերթի պատասխանատու խմբագիրն էր Հայկ Մսրլյանը, որը համագործակցում էր Կոմիտեի հետ[3]: 1974 թ. Մանչեստրի հայ ուսանողները հիմնել էին «Էրեբունի» միությունը և մշակութային կապեր են հաստատել Կոմիտեի հետ[4]:

Արդեն 1977-1978 թթ. Կոմիտեի հասցեների մեջ Մեծ Բրիտանիայի հայ համայնքից կար 7 կազմակերպության և 54 անհատի անուն[5]:

Փոխադարձ յցելություններ և առաքումներ: Կոմիտեի աշխատանքներում կարևոր տեղ էին զբաղեցնում փոխայցելությունները, որոնք նպաստում էին փոխադարձ ճանաչողությանն ու փոխվստահությանը: Արդեն 1964 թ. Մեծ Բրիտանիայում է եղել երաժշտագետ Ցիցիլիա Բրուտյանը, ով հանդես է եկել դասախոսություններով, հանդիպել լոնդոնահայ երաժիշտներին, ծանոթացել նրանց գործունեությանը[6], իսկ փետրվարի 3-ին Լոնդոն է այցելել Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն[7]:

1965 թ. Լոնդոն է այցելել Հայկական թատերական ընկերության վարչության նախագահ, Գ. Սունդուկյանի անվան թատրոնի ռեժիսոր, հանրապետության ժողովրդական դերասան Հրաչյա Ղափլանյանը կնոջ՝ վաստակավոր դերասանուհի Էմմա Վարդանյանի հետ: Այցելությունը նպատակ ուներ ծանոթանալ Լոնդոնի թատերական կյանքին, ինչպես նաև ուսումնասիրելը «Հայ տան» մշակութային գործունեությունը[8]:

Մեծ Բրիտանիայի հայերի հետ կապերը համեմատաբար ավելի են ջերմացել 1970-ական թթ.: Կոմիտեի աշխատանքային ծրագրերում խոսվում էր Մեծ Բրիտանիայի հայ համայնքի հետ մշակութային կապերի ամրապնդման անհրաժեշտության մասին և նշվում էր, որ այդ հարաբերությունները գնահատվում են որպես զարգացող[9]: Այնուամենայնիվ Կոմիտեն ջանքեր էր ներդնում մշակութային խմբեր Մեծ Բրիտանիա գործուղելու համար: Նա բոլոր հնարավորությունները գործադրում էր, որպեսզի մասնակցություն ունենար սփյուռքում տեղի ունեցող կարևոր միջոցառումներին: Այսպես 1978 թ. Լոնդոնում տեղի ունենցած հայ երաժշտության փառատոն-գիտաժողովին հանդես են եկել խորհրդահայ և սփյուռքահայ ստեղծագործողներ, այդ թվում՝ Է. Միրզոյանը, Ա. Հովհաննեսը, Հ. Չեքիջյանը, Լ. Ճգնավորյանը, Լ. Զաքարյանը, Լ. Չիլինգարյանը և ուրիշներ[10]:

Խորհրդային Հայաստանի 60-րդ տարելիցին ընդառաջ՝ 1980 թ. նոյեմբերի 24-26-ը Կոմիտեի կազմակերպմամբ տեղի է ունեցել սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների համաժողով՝ հայրենի մտավորականության ներկայացուցիչների մասնակցությամբ: Խորագիրն էր՝ «Վերածնված Հայրենիքը և Սփյուռքը»: Ներկա էին նաև Մեծ Բրիտանիայի հայության ներկայացուցիչներ[11]: Նաև 1981 թ. Մեծ Բրիտանիայում է եղել ժո-

---

[1] Տե՛ս նույն տեղում, g. 1, գ. 24, թ. 1-18:

[2] «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 1980, թիվ 11:

[3] Տե՛ս Վարդանյան Ն., Մշակութային և հասարակական կյանքը Սփյուռքում (1972 հունվար-հունիս), «Պատմաբանասիրական հանդես», 1972 թ., թիվ 3, էջ 287:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 8, գ. 187, թ. 26:

[5] Տե՛ս նույն տեղում, գ. 25, թ. 36-37:

[6] Տե՛ս նույն տեղում, g. 2, գ. 188, թ. 11:

[7] Տե՛ս նույն տեղում, թ. 17:

[8] Տե՛ս նույն տեղում, թ. 25:

[9] Տե՛ս նույն տեղում, g. 3, գ. 6:

[10] Տե՛ս Միրզախանյան Ռ., Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը 1966-1990 թվականներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, թիվ 2, էջ 216:

[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 9, գ. 40, թ. 2:

ղովրդական արտիստ, կոմպոզիտոր Ա. Հարությունյանը, ով հանդիպել է Մեծ Բրիտանիայի հայ գաղութի ներկայացուցիչների, մասնավորապես երաժիշտների հետ [1]:

Մեծ Բրիտանիայի հայ համայնքի հետ կապերն ակտիվացնելուն էին ուղղված նաև 1981 թ. դեկտեմբերի 1-8-ը Լոնդոնում անցկացված հայկական ֆիլմերի շաբաթը, որտեղ ցուցադրվել են «Հայֆիլմ» կինոստուդիայի ֆիլմերից: Այդ ցուցադրությանը ներկա գտնվելու համար պատվիրակություն էր մեկնել Մեծ Բրիտանիա՝ ՀԽՍՀ «Պետկինոյի» նախագահ Ռ. Սամսոնյան և կինոռեժիսոր Հ. Մալյանի ղեկավարությամբ[2]:

Չնայած ասվածին, Կոմիտեն իրականում լայն հնարավորություններ չուներ հայ արվեստագետներին և անվանի գործիչներին յուրաքանչյուր հրավերով արտերկիր գործուղելու[3], որը հաճախ էապես դժվարացնում էր Կոմիտեի գործունեությունը: Փաստորեն, չնայած օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններին՝ Կոմիտեն կարողացել է զգալիորեն աշխուժացնել կապերը Մեծ Բրիտանիայի հայ համայնքի հետ:

Կապերի զարգացման համատեքստում պետք է դիտարկել նաև Կոմիտեի միջոցով Մեծ Բրիտանիայի հայ համայնք կատարած առաքումները, որոնք հիմնականում սահմանափակվում էին բնագիտական լաբորատորիաների, գրքերի, տարաբնույթ ճանաչողական բնույթի սկավառակների և հուշանվերների տրամադրմամբ: Կոմիտեի գործունեության առաջին տարիներին ընդհանրապես Մեծ Բրիտանիայի հայ համայնք են ուղարկվել միայն ամսագրեր և գրականություն[4]:

Հետագա տարիներին Մեծ Բրիտանիայում Կոմիտեն հիմնական գործընկեր «Հայ տուն» միության խնդրանքով ուղարում էր գեղարվեստական, թատերական գրականություն, ձայնապնակներ և այլ անհրաժեշտ պարագաներ[5]: Կոմիտեն Լոնդոնի «Հայ տան» դպրոցի համար առաքել է նաև դասագրքեր[6]: Այդ ժամանակ «Հայ տունը» բազմաթիվ հրավերներ է ուղարկել անվանի գործիչների և արվեստագետների՝ Կոմիտեի միջոցով բրիտանահայ համայնք այցելելու համար[7]:

Կոմիտեն Մեծ Բրիտանիայի հայ համայնք էր ուղարկում խորհրդահայ պարբերականներ և մասնավորապես իր տպագիր օրգաններ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը և «Սովետական Հայաստան» ամսագիրը[8]:

Կոմիտեի գործունեությունը երիտասարդների աջակցության և ուսուցիչների վերապատրաստման ուղղությամբ: Եթե Կոմիտեի գործունեության առաջին հնգամյակում (1964-1969 թթ.) արտասահմանից հրավիրվող ուսուցիչների և երեխաների մեջ Մեծ Բրիտանիայից ոչ մի ներկայացուցիչ չկար, ապա՝ հաջորդ տարիներին, արդեն որոշակի տեղաշարժ է նկատվում: 1970 թ. Հայաստանում վերապատրաստվող ուսուցիչների մեջ Մեծ Բրիտանիայից կար մեկ ներկայացուցիչ[9], նույն իրավիճակն էր հանգիստը հայրենիքում անցկացնող սփյուռքահայ երեխաների ցուցակներում: Մեծ Բրիտանիայից առաջին հայ երեխան հանգիստը ՀԽՍՀ ճամբարում անցկացրեց 1970 թ.[10]:

Խորհրդային Հայաստանում անցկացվող սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրերին Մեծ Բրիտանիայի հայ համայնքի ներկայացուցիչները գրեթե մշտապես մասնակցել են 1970 թ. սկսած: Եթե նախորդ շրջաններում ոչ բոլոր տարիներին էին վերապատրաստման համար հրավիրվում Մեծ Բրիտանիայի հայ ուսուցիչներ[11], ապա այժմ փորձում են լրացնել այդ բացը[12]: Այսպես 1970-1985 թթ. ամենամյա վերապատրաստմանը մշտապես մասնակցել է բրիտանահայ մեկ ուսուցիչ (բացառութ-

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 54, թ. 12:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 53, թ. 46:
[3] Տե՛ս նույն տեղում, g. 2, գ. 188:
[4] Տե՛ս նույն տեղում, g. 9, գ. 186:
[5] Տե՛ս նույն տեղում, g. 4, գ. 299, թ. 7:
[6] Տե՛ս նույն տեղում, g. 8, գ. 187, թ. 31
[7] Տե՛ս նույն տեղում, g. 4, գ. 299, թ. 7:
[8] Տե՛ս նույն տեղում, g. 6, գ. 19, թ. 43-44:
[9] Տե՛ս նույն տեղում, g. 5, գ. 11, թ 9:
[10] Տե՛ս նույն տեղում, g. 4, գ. 37, թ. 2:
[11] Տե՛ս նույն տեղում, գ. 19, թ. 20:
[12] Տե՛ս նույն տեղում, g. 9, գ. 53, թ. 30:

յամբ 1977-1978 թթ.):

Խորհրդային Հայաստանի ճամբարներում իրենց հանգիստն են անցկացրել բրիտանահայ 4 երեխա (նախատեսված 3-ի փոխարեն) 1970 թ., 3-ը՝ 1977 թ., 2-ական 1979-1981 թթ.[1], 7-ը՝ 1983 թ. (նախատեսված 4-ի փոխարեն), 2-ը՝ 1984 թ. և 5-ը՝ 1985 թ.:

Ամփոփելով նշենք, որ չնայած էական դժվարություններին, Կոմիտեին հաջողվել է զարգացնել կապերը Մեծ Բրիտանիայի հայության հետ: Կապերի հաստատումն ու զարգացումը հիմնելով համայնքի խորազննին ճանաչողության վրա՝ Կոմիտեն փորձեց ըստ հնարավորի բիտանահայ համայնքի հետ հաստատել բազմակողմանի հարաբերություններ՝ թիրախում ունենալով հայրենիքի հետ կապն ամրապնդելու նպատակը և ըստ այդմ՝ լուծելով մշակութային կապերի ամրապնդման, փոխայցելությունների իրականացման, գրականության առաքման, հայրենիքում բրիտանահայ ուսուցիչների վերապատրաստման և երեխաների հանգստի կազմակերպման խնդիրների լուծումը:

Лусине Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ОБЩИНА ВЕЛИКОБРИТАНИИ В 1964-1985 ГГ. Комитет был основан в 1964 г. для развития отношений с Армянской Диаспорой. В составе комитета действовали отделения по развитию отношений с армянскими общинами разных регионах (Азия, Африка, Европа, Америка). Комитет начал развивать отношения с европейскими странами сразу же после основания. Для достижения своей цели комитет начал развивать отношения с «прогрессивными» организациями армянской общины Великобритании. Несмотря на проблемы комитету удалось развивать взаимоотношения с армянской общиной Великобритании. Основными направлениями деятельности комитета являлись: развитие отношений, подготовка учителей, организация летнего отдыха детей из диаспоры в лагерях Советской Армении и обмен делегациями.

Ключевые слова: диаспора, комитет, община, Великобритания, колония, визиты, культура.

Lusine Grigoryan, ACTIVITIES OF THE COMMITTEE FOR CULTURAL RELATIONS WITH DIASPORA ARMENIANS AND THE ARMENIAN COMMUNITY OF GREAT BRIAIN IN 1964-1985. The committee was founded in 1964 to develop relations with the Armenian Diaspora. The Committee had offices for the development of relations with Armenian communities in different regions (Asia, Africa, Europe, and America). The committee began to develop relations with European countries immediately after its foundation. To achieve its goal, the Committee began to develop relations with the “progressive” organizations of the Armenian community in Great Britain. Despite the problems, the Committee was able to develop relations with the Armenian community of Great Britain. The main activities of the Committee were: development of relations, training of teachers, organization of summer holidays for children from the diaspora in the camps of Soviet Armenia and exchange of delegations.

Key words: diaspora, committee, community, Great Britain, colony, visits, culture.

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 43, թ. 23: